ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով «Գնանշման հարցման» գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան «27» «փետրվարի» 2026թ.

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ս.Սեդրակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Հարությունյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա. Հակոբյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ.Մարգարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Գ. Մանուկյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Տ.Հակոբյան

1. Տեղեկություն «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

1.1. ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09 ծածկագրով մրցույթի գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիմքով:

2. Տեղեկություն «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով մրցույթի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1. «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2026 թվականի փետրվարի 25-ին, ժամը 15:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	ՀՎՀՀ	Հեռախոսահամար
«ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ	consultgmllc@gmail.com	01357262	041-45-11-72
«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	info@perfectaudit.am	02591995	010-52-47-24

4. Տեղեկություններ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման վերաբերյալ

4.1. Գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

5. Տեղեկություններ հրավերի պահանջներին համապատասխան հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման վերաբերյալ

5.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ս.Սեդրակյան)

6.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Ս.Սեդրակյան)

7.1 Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան: Համաձայն հրավերի Հավելված 1.1 /Տեխնիկական բնութագիր/ 33-րդ կետի՝ «Աուդիտ իրականացնող Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա և դրան նախորդող վերջին վեց ամսվա ընթացքում պետք է ունենա մշտական հիմունքներով աշխատող առնվազն **հինգ** որակավորված աուդիտորներ, որոնց հետ պետք է կնքված լինեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատանքային պայմանագրեր, ինչպես նաև հաշվառված լինեն Հայաստանի Հանրապետության աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի ռեեստրում»:
Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»-ի կայքէջի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ «ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ում հաշվառված են՝ 4 որակավորված աուդիտոր, իսկ «ՓԸՐՖԵՔԹ» ՍՊԸ- ում հաշվառված են 5 որակավորված աուդիտոր: Հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի՝ «ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի հայտում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը» հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168 –Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526–Ն որոշման կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և հանձնաժողովի քարտուղարը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին հնարավորություն տալով վերջինիս մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում առկա անհամապատասխանությունները: Վերջինս սահմանված ժամանակահատվածում շտկել է՝ առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

h/h	Գնման առարկայի՝ ապրանքի անվանումը	«ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ		«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	
		Գինն առանց ԱԱՀ	գինը	Գինն առանց ԱԱՀ	գինը
1	«Ֆինանսական աուդիտի ծառայություններ»	1 300 000	1 560 000	3 750 000	4 500 000

8.1. Մասնակիցների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

9.1. «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

10. Տեղեկություն «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու պահանջներին բավարարելու մասին

10.1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց ցուցակները և արձանագրել է, որ մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցները վերոնշյալ ցուցակներում ընդգրկված չեն:

11. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

11.1. «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով մրցույթի մասնակիցների ներկայացված գնային առաջարկների արդյունքում առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ -ին, երկրորդ տեղ՝ «ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ»-ին :

12. Հանձնաժողովը որոշեց՝

(Ս.Սեդրակյան)

12.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մրցույթի հաղթող ճանաչել՝ «ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ -ին:

12.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՀԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-26/09» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին, ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, ծանուցել՝ օրենքով և հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել՝

ա) պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով և

բ) որակավորման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ պայմանագրի գնի 15 տոկոսի չափով:

12.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

12.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

13.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	_____	Ս.Սեդրակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Ա.Հարությունյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	_____	Ա.Հակոբյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	_____	Գ.Մարգարյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	_____	Գ.Մանուկյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	_____	Տ.Հակոբյան